Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 4

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2024-2025 ուս. տարվա գիտական խորհրդի առցանց հարցման նիստի

ք.Երևան 25 ապրիլի 2025թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 20 անդամներից 15–ը:

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դաղայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. **Ֆարմացիայի ինստիտուտում իրականացվող ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ինքնատիպության տոկոսի ընդունելի շեմը սահմանելու մասին հարցը:**
2. **Ընթացիկ հարցեր:**

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

3. **Ֆարմացիայի ինստիտուտում իրականացվող ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ինքնատիպության տոկոսի ընդունելի շեմը սահմանելու մասին հարցը:**

Լսեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի քարտուղար Ա. Դաղայանին, ով առցանց ձևաչափով գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ ՈՒԿՀ (e-learning) հարթակում արդեն հասանելի է գրագողության հայտնաբերման Turnitin Similarity գործիքը, որով պետք է ստուգվեն ուսանողների կողմից e-learning հարթակ վերբեռնված ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը: Նա նշեց, որ ինքնատիպության տոկոսի ընդունելի շեմը պետք է սահմանվի գիտական խորհրդի որոշմամբ:

Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենության նիստում նախնական քննարկման արդյունքում որոշվել է մագիստրոսական թեզերի ինքնատիպության ընդունելի շեմը սահմանել 60%, իսկ ավարտական աշխատանքների դեպքում՝ ըստ

հայեցողության: Գիտական խորհրդի անդամները միաձայն համաձայնություն տվեցին առաջարկվող շեմային ցուցանիշին:

Որոշեցին ՝ (միաձայն) 2024-2025 ուսումնական տարվա համար մագիստրոսական թեզերի ինքնատիպության տոկոսի ընդունելի շեմը սահմանել 60%, իսկ ավարտական աշխատանքների դեպքում՝ ըստ հայեցողության:

1. **Ընթացիկ հարցեր:**

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝
բ.գ.թ, դոցենտ **Ա. Մկրտչյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝
բ.գ.թ., դոցենտ **Ա. Դաղայան**